Արձանագրություն N2
ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

03.02.2020թ.
Ժամը՝ 11:00

ք. Երևան

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյան /գնահատող/, Ա. Սարգսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ռ. Աբրահամյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի փետրվարի 3-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ
2	«ԻՐՏԻԳ»
3	«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ
4	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3 . Մասնակցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Գնանշման հարցում ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

1.Երևան քաղաքի փողոցներում բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման

ՀՀ	մասնակցի անվանումը	նախահաշվային գին	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ ՍՊԸ		104200	20840	25008	150,048
2	ԻՐՏԻԳ		154600	7730	32466	194,796
3	ԳՈԼԴ-ՆԵԹ ՍՊԸ		158000			158,000

4	ԳՐԻՏԻԳ ՍՊԸ		984000	98400		1,082,400

Մասնակիցների կողմից կողմից ներկայացրած գնային առաջարկներում չկան թվաբանական անշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին բացառությամբ «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ի և «ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերի, մասնավորապես.

- «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում է հրավերով սահմանված «մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» և ներկայացված հայտից պարզ չէ փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ ում կողմից է հաստատվել:

-«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում է լիազորագիրը, այսինքն. հայտում էլեկտրոնային ստորագրությունը նշված է «Սամսոն Մարգարյանի» անունով , իսկ «մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» հատվածում «Սամվել Մելիքսեթյանի» անունով:

4.2 Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, իսկ «ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու դեպքում նրա հայտը գնահատվում է բավարար հակառակ դեպքում մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 06.02.2020թ. ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ 224/2 սենյակ հասցեում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

Անդամներ՝ ---------- Կ. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Թ.Հովեսյան